ծաւ սիրով ձեռն արկի գրել՝ սկսեալ ի ՌՄԼԴ Արամեանս շառաւիղի. և ի յեօթներորդ յաւուրն յուլիսի մեծաւ տառապանօք աւարտեցի զսա շնորհալի գրքուկս՝ յուլիսի Ը. աւուրն։

«Եւ արդ՝ որք հանդիպիք ի սմա (այ.) այսմիկ ցանկալի գրքուկիս. առ ի զբօսնուլ ընթերցմամբ՝ կերկերեալ սրտիւ ժրի կարի թախանձանօք ի հանդիպողացդ՝ անմեղադիր լինել սխալանաց գրագրիս մեղսամածի վասն զի ըստ ասից ոմանց գիտնոց (միտք մարդկային գոլով տկար սղալի. Առանց սղալման մինն միայն գտանի) որում փառք . . . »։

«Ցուսկ յետոյ յիշեսջիք զՀոգևոր ծնողն իմ զՏէր Եփրեմ Սրբազնակատար հանգուցեալ կաթուղիկոսն»։

№ 5[1]

«Ցաղագս աստուածային բացարձակ կատարելութեանց. . . ստորոգելեացն»։

«Արդ՝ գուշնաքեայ բանս թարգմանեալ եղև ի Լատինացւոց բարբառէ ի Հայոց լեզու ի ձեռն ուրումն լեհացի Սաեփաննոս կրօնաւորի ի փառս Քսի. . . . »։

Գիրքս քառածալի գիրքով և նոտր գրով գրուած՝ երկրորդ էջին վերայ մի գունաւոր պատկեր նկարուած—Ս. Մեսրովպ չոգած՝ առաջն ա. բ . . . տառերն մի տախտակի վերան գրուած՝ այս տախտակը ամպի միջից մի ձեռք է բռնած՝ տախտակի ներքև մի ոսկեզօծ գրքի պատկեր՝ որոյ ներքև գաւազան մի՝ որ ընկած է գոյնզգոյն ծաղկանց մէջ. Սրբոյն ետևն բարձրացած է կանանչ տերևներով և կարմիր ծաղիկներով մի ծառ՝ որ Սրբոյն վերայ հովանի արած։

Հայկազնեան բարառանի մի յիշատակարանը։

«Ի 1868 ամի յՈրմի գաւառումն . . . գիւղումն հին եկեղեցի կայր՝ զոր ասորիքն կամեցան նորոգել՝ որ խաղդուած էր՝ քանդելոյ ժամանակին . . . մարմար քարի վրայ քանդակեալ խաչեր դուրս եկան . . . հայերէն հին ձև գրով այսպէս.

---

1. Ամեն ձեռագրոց վերայ թուեր նշանակուած էին։